ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. հունիսի 27-ից 28-ն Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա, Հայնբուրգ) շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   ԷրիկԳրիգորյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   Շրջակա միջավայրի նախարար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա, Հայնբուրգ)

   2019թ. հունիսի 27-ից 28-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Էներգետիկ համայնքի քարտուղարություն:

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Մասնակցություն՝ «Էներգետիկ համայնքի կայուն էներգիայի 3-րդ ֆորումին», ինչպես նաև էներգետիկայի ու շրջակա միջավայրի նախարարաների հանդիպմանը:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

«Էներգետիկ համայնքի կայուն էներգիայի 3-րդ ֆորումին» ներկա էին էներգետիկայի, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության համար պատասխանատու նախարարներ, փոխնախարարներ, Եվրոպական Հանձնաժողովի, ԵՄ անդամ պետությունների բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև գիտական, քաղաքացիական հասարակության և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ:
Հանդիպման շրջանակներում քննարկվեցին էներգետիկ համայնքի կողմից դեկարբոնացված էներգիայի համընդգրկման հնարավոր ուղիները:

Քննարկեցինք նաև 2030թ. Էներգետիկ համայնքի նոր օրենսդրական շրջանակի ստեղծման անհրաժեշտությունը, որն ուղղված է վերականգնվող էներգիայի աղբյուրների՝ (մասնավորապես քամու և արևի) մասնաբաժնի մեծացմանը, արդյունավետության բարձրացմանը, ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը՝ համաձայն Փարիզի Համաձայնագրի:

Քննարկումների ընթացքում անդրադարձ եղավ նաև հանքահումքային էներգետիկայի աստիճանական տեղակալման ուղղությամբ ռազմավարությունների մշակման անհրաժեշտությանը: Մասնակիցները կոչ արեցին ածխային էներգաայի արտադրության համար նախատեսվող սուբսիդիների վերացմանը:

Փոքր ՀԷԿ-երի առնչությամբ արձանագրվեց, որ վերջիններիս ներդրումն Էներգետիկ համայնքի էներգաարտադրության մեջ չափազանց սահմանափակ է, մինչդեռ ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ անհամեմատ բարձր: Հետևաբար, նոր նախագծերի մշակումը պետք է մանրակրկիտ ուսումնասիրվի, իսկ Էներգետիկ համայնքի օրենսդրության շրջակա միջավայրի գնահատման և ռազմավարական էկոլոգիական գնահատման (ծրագրի, գետավազանի և տարածաշրջանային մակարդակի վրա) լիարժեք և պատշաճ իրականացումը ցանկացած նախագծի համար կարևոր նախապայման է:

Հայնբուրգում կայացած նախարարական խորհրդի ոչ պաշտոնական հանդիպմանը հիմականում քննարկվեցին Էներգետիկ համայնքի համաձայնագրի վերաբերյալ առկա փոփոխությունները: «Մաքուր էներգիայի փաթեթի» վերաբերյալ փոխանակեցինք տեսակետներ՝ ուղղված վերականգնվող էներգիայի, էներգաարդյունավետության և ջերմոցային գազերի արտանետման կրճատմանը՝ էներգետիկ համայնքի 2030 թիրախների հասցեագրման համատեքստում:

7. <u>ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u>

Պայմանավորվածություն ձեռք բերվեց ներկայացնելու ցածր ածխածնային զարգացման նորարարական նախագծեր և բիզնես մոդելներ կլիմայի փոփոխության բացասական

հետևանքների մեղմման ուղղությամբ՝ նկատի առնելով գործնական մարտահրավերները և դրանց հաղթահարման հնարավորությունները:

Պայմանավորվածություն եղավ նաև, որ էներգետիկ համայնքի մասնակիցները պետք է ներդրումներ կատարեն տարածաշրջանի վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության համար դեռևս չօգտագործված ներուժի ուղղությամբ, ինչպես նաև համաձայնվեցին, որ առաջիկա տարիներին պետք է ավելանա բանկերի և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող ցածր ածխածնային ծրագրերի թիվը:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակական հիմունքերով ապահովել հանրության իրազեկվածությունը վերոնշյալ հարցերի առնչությամբ:

Շրջակա միջավայրի նախարար՝

Էրիկ Գրիգորյան

X _____